ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

# HISTORY AND CULTURE

## JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

*Խմբագրական խորհուրդ՝*

**Միքայել Մալխասյան** (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Микаэл Малхасян** (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Mikayel Malkhasyan** (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

**ISSN 1829-2771**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ / CONTENT

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY


**Виген Цатрян, Руслан Кобзарь** - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН ..... 7

**Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար** – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

**Vigen Tsatryan, Ruslan Kobzar** – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

**Արգիշտի Վարդանյան –** ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

**Аргишти Варданян –** ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ .... 29

**Argishti Vardanyan –** A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY ..... 29

**Միքայել Մալխասյան** - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

**Микаэл Малхасян** - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

**Mikayel Malkhasyan** - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

**Ֆելիքս Մովսիսյան** - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

**Феликс Мовсисян** - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX ..... 54

**Feliks Movsisyan** - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

**Հովիկ Գրիգորյան** - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

**Овик Григорян** - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) ..... 72

**Hovik Grigoryan** - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

**Գայանե Հովհաննիսյան** – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. ..... 74

**Гаяне Оганнисян** – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

**Gayane Hovhannisyan** – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

**Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան -** ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

**Эдик Минасян, Артавазд Дарбинян –** ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). ..... 89

**Edik Minasian, Artavazd Darbinian** – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) ..... 89

**Դավիթ Բարսեղյան** - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ..... 90

**Давит Барсегян** – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ ..... 95

**Davit Barseghyan** – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY ..... 95

**Լիլիթ Մակարյան** – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) ..... 96

**Лилит Макарян** – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) ..... 103

**Lilit Makaryan** – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) ..... 103

**Էդիկ Մինասյան** – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

**Эдик Минасян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА ..... 113

**Edik Minasyan** – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY ..... 114

**Էդգար Չախոյան** – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) ..... 115

**Эдгар Чахоян** - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) ..... 134

**Edgar Chakhoyan** - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) ..... 135

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ** / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**Ռաֆիկ Նահապետյան** – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) ..... 136

**Рафик Наапетян** – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) ..... 146

**Rafik Nahapetyan** – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) ..... 147

**Արտակ Խաչատրյան** – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ ..... 148

**Артак Хачатрян** – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. ..... 155

**Artak Khachatryan** – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO ..... 155

**ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ /** ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

**Աննա Դավթյան** – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ ..... 156

**Анна Давтян** - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА ..... 164

**Anna Davtyan** - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) ..... 164

**Ռուզաննա Միքայելյան –** ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ ..... 172

**Рузанна Микаелян –** ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ ..... 175

**Ruzanna Mikayelyan** – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI ..... 176

**Զահրա Մալեքի** – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ ..... 177

**Захра Малеки** – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ ..... 187

**Zahra Maleqi** – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI ..... 187

**Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան** – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ..... 188

**Марине Геворкян, Гаяне Товмасян** – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ ..... 198

**Marine Gevorgyan, Gayane Tovmasyan** – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION ..... 198

**ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ /** ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

**Լիլիթ Հակոբյան** – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ ..... 199

**Лилит Акобян** - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ ..... 204

**Lilit Hakobyan** – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" ..... 205

**Վահագն Հակոբյան** – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ..... 206

**Ваагн Акобян** – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА ..... 218

**Vahagn Hakobyan** – FROM DAVID ANANUN'S LETTERS ..... 218

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ /** УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

**Լիլիթ Մինասյան -** ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) ..... 219

**Лилит Минасян** - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) ..... 229

**Lilit Minasyan** - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) ..... 229

**Մերի Հովհաննիսյան -** «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 230

**Мери Оганнисян -** ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ ..... 236

**Meri Hovhannisyan -** FEATURES OF USING THE DEBATE METHOD ..... 236

**Արմեն Խաչիկյան** – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ..... 237

**Армен Хачикян** – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА ..... 246

**Armen Khachikyan** – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES ..... 246

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: ..... 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: ..... 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: ..... 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

## ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ ..... 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ ..... 258

## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) ..... 263

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 266

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 267

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 268

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 268

**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ** ..... 269

**Արտակ Խաչատրյան**

# ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

***Հիմնաբառեր.*** ԼՂԻՄ, ԽՍՀՄ, Աղվանք, ազգային-պետական քաղաքականություն, էթնոգենեզիս, Արևելյան Անդրկովկաս, Ա. Դենիկին, Շուշի, աղվանական տեսություն, մար-ատրպատականյան տեսություն, թյուրքական տեսություն:

*ԽՍՀՄ ստեղծումով և Անդրկովկասի խորհրդայնացումով նոր փուլ թևակոխեց Ադրբեջանի ազգաշինության գործընթացը: Քեմալական Թուրքիային և Ադրբեջանին խորհրդային ղեկավարությունը դիտարկում էր մահմեդական արևելքում սոցիալիզմը տարածելու միջոց, և դրանով է պայմանավորված Միութենական կենտրոնի առանձնահատուկ քաղաքականությունը Ադրբեջանի նկատմամբ: Խորհրդային Ադրբեջանը ինքնության որոնումների մի քանի շրջափուլ անցավ: Ազգի ստալինյան ըմբռնման մեջ կարևոր տեղ էր գրավում տարածքը: Այս ըմբռնման տրամաբանությամբ էլ տարվում էր Խորհրդային Ադրբեջանի պետական քաղաքականությունը: ԼՂԻՄ-ի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունն ուներ մշակութային յուրացման բաղադրիչ: Արցախյան մշակութային շերտի, հատկապես՝ եկեղեցիների, հոգևոր կառույցների «աղվանականացումը» խնդիր ուներ բացառել տեղի հայերի ավտոքթոնության իսկությունը՝ այդպիսով ԼՂԻՄ-ի տարածքի իրական «պատմական տեր» համարելով ադրբեջանցիներին: Դեռևս խորհրդային շրջանից սկիզբ առած այդ քաղաքականության տրամաբանությունը Ադրբեջանը շարունակում է ցայսօր:*

Արևելյան Անդրկովկասի քաղաքական քարտեզում հայտնվելով 1918 թ. օսմանյան զորքերի՝ Բաքվում հայտնվելուց հետո՝ Ադրբեջան պետությունը կայացման և պատմության կառուցարկման, ինքնության կերտման նոր, որակապես այլ փուլ մտավ խորհրդայնացումից հետո: Եթե Հայաստանը և Վրաստանն ունեին գոնե երկու հազարամյակից դենը ձգվող պատմություն, կայացած ազգային ինքնագիտակցություն և բազմաշերտ մշակույթ, ապա Ադրբեջանի պարագայում թվարկվածները բացակայում էին: Ուստի Ադրբեջանը խնդիր ուներ լցնել պատմամշակութային հետնախորքի դատարկությունը, որն իրագործելու համար օգտագործվելու էին հարևան ժողովուրդների պատմամշակութային արժեքները: Քանի որ ԽՍՀՄ-ն իր կազմի մեջ էր ներառել մշակութային, քաղաքական և քաղաքակրթական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող էթնիկ հանրությունների, ապա ներքին ազգային-պետական քաղաքականությունն իրականացվում էր ոչ թե համընդհանուր-հավասար սկզբունքով, այլ՝ ըստ զարգացման մակարդակի: Զարգացման առավել ցածր մակարդակում գտնվող ժողովուրդների նկատմամբ վարվում էր առավել ուշադիր քաղաքականություն: Անդրկովկասի երեք հանրապետություններից զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա գտնվում էր Ադրբեջանը, որի նկատմամբ քաղաքականությունը տարբերվում էր Վրաստանի և Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունից: Մոսկովյան Կենտրոնի լուռ համաձայնությունն էին ստանում Ադրբեջանի նախաձեռնողական այն քայլերը, որոնք ուղղված էին սեփական պատմության և մշակութային շերտի ստեղծմանը: Ադրբեջան պետությունը ստեղծվել էր նախկին Ռուսական կայսրության Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների տարածքներում, որի հիմքով էլ այդ տարածքների նկատմամբ իր նկրտումներն էր հիմնավորում: Արցախը ժամանակին ևս եղել էր Ելիզավետպոլի նահանգի կազմում: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ընթացող քաղաքական վերափոխությունների հետևանքով 1918 թ. կազմավորված Արդբեջանի Հանրապետությունն իր տարածքային նկրտումներով հարկադրեց Արցախին դառնալ հակամարտության սուբյեկտ, 1918 թ. հուլիս-սեպտեմբեր և 1919 թ. փետրվար ամիսներին տեղի ունեցած Ղարաբաղի հայության համագումարներով ձեռնամուխ լինել կոնֆլիկտային իրավիճակում ինքնակազմակերպվելու գործին: Եվ այդուհետ Արցախը

1919-1920 թթ. Ադրբեջանի և Հայաստանի առաջին հանրապետության միջև վերածվեց հակամարտության օբյեկտի: Խորհրդայնացվելուց հետո՝ 1921 թ., Կովկասյան բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը տրվել էր Ադրբեջանին: 1923 թ. ստեղծվեց ԼՂԻՄ-ը: Վերջինիս նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի քաղաքականությունը մեկ նպատակ չէ, որ հետապնդում էր: Ադրբեջան պետության ազգային-աշխարհագրական տարածքի ձևավորումից զատ՝ նպատակ կար այդ տարածքում առկա հարուստ պատմամշակութային արժեքների յուրացմամբ ստեղծել ադրբեջանական մշակույթի տպավորություն: Խորհրդային շրջանում Ադրբեջանի ղեկավարությունն իր առջև խնդիր դրեց նորովի «ստեղծել» Ադրբեջան պետության պատմությունը՝ համապատասխանաբար առաջ քաշելով ադրբեջանցիների էթնոգենեզի և էթնիկ պատմության երեք հիմնական տեսություններ, որոնք որոշ դեպքերում իրար զուգահեռ են եղել, որոշ դեպքերում՝ իրար հաջորդող: Այդ տեսություններն են.

1. Աղվանական, 2. Մար-ատրպատականյան, 3. Թյուրքական:

1920-ական թթ. սկզբներին, երբ խորհրդային ղեկավարները դեռևս փափագում էին քեմալական Թուրքիայի միջոցով և նրա օգնությամբ հեղափոխությունը Արևելք արտահանելու գաղափարը, թյուրքական տեսությունը շատ ակտիվ շրջանառվում էր: Նույն 1920-ական թթ. Բաքվում գումարվեցին լուրջ գիտական կոնֆերանսներ թյուրքագիտության, թյուրքական լեզվի խնդիրները քննարկելու համար: Խորհրդային ղեկավարությունն իր հերթին թյուրքական տեսության զարգացման նպաստավոր պայմաններ էր ստեղծում: Այդ կերպ և՛ գիտական, և՛ գաղափարաքաղաքական բնագավառներում խթանելով նման միջոցառումները՝ բոլշևիկները փորձում էին նաև ներքին կապող օղակ ստեղծել Թուրքիայի հետ հարաբերություններում և համերաշխության առավել լայն հեռանկար ձևավորել: Նման քաղաքականությունը նորույթ չէր: 1918-1920 թթ. գոյատևած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, ըստ էության, ստեղծվել էր Թուրքիայի մտահղացմամբ և ջանքերով, իսկ բոլշևիկները ժառանգել էին այդ նորաստեղծ հանրապետությունը և պատմական հարմար պահը որսալով՝ փորձում էին այն սակարկման ռեսուրս դարձնել Թուրքիայի հետ մերձեցման գործընթացում: Դեռևս ժամանակին այդ ամենի արհեստականությունը մատնանշել էր Ռուսաստանի հարավի Սպիտակ շարժման առաջնորդներից Ա. Ի. Դենիկինը, որ գրում էր. «Ամեն ինչ Ադրբեջանական հանրապետությունում արհեստական էր, «անիսկական»՝ սկսած անվանումից, որ փոխառնվել էր Պարսկաստանի նահանգներից մեկից: Արհեստական տերիտորիա, որ ընդգրկում էր լեզգիական Զաքաթալան, հայ-թաթարական Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները և ռուսական Մուղանի, և որը միավորված էր թուրքական քաղաքականությամբ՝ որպես Կովկասում պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ֆորպոստ: Արհեստական պետականություն, քանզի այդ տարածքներում, ընկած ժողովուրդների մեծ գաղթի ճանապարհին և ենթարկված փոփոխվող նվաճողների բազմակերպ մշակույթների ներազդեցությանը, մշտապես ապրում էին ցրված մանր ցեղեր, որ թշնամանում էին միմյանց հետ և որոնք ցայսօր դեռևս պահպանել են քոչվորական կենցաղին բնորոշ գծեր: Ի վերջո, արհեստականորեն էր պահպանվում Ադրբեջանական կառավարությունը. սկզբում Նուրի փաշայի կամոք, ապա գեներալ Թոմսոնի, իսկ հետո՝ ուղղակի ինտերվենցիայով...»[1]: Եվ ամենևին էլ անսպասելի չէր, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյատևման փուլում (1918-1920 թթ.) ադրբեջանական ազգ-պետության հայեցակարգը կայուն կերպով տարածված չէր բնակչության լայն զանգվածների շրջանում[2]: Հատկանշական է, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյատևման ժամանակ

* Հոդվածը ներկայացվել է 26.06.2021 թ., գրախոսվել՝ 15.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Деникин А., Очерки русской смуты: Вооруженные силы юга России. Распад Российской империи. Октябрь 1918-январь 1919. Воспоминания. Мемуары, Минск, 2002, с. 297-298.*

[2] *Astourian St., In search of their forefathers: National identity and the historiography and politics of Armenian and Azerbaijani ethnogeneses, Nationalizm and history, The politics of nation building in post-soviet Armenia, Azerbaijan and Georgia, Edited by Donald V. Schwartz and Razmik Panossian, University of Toronto, 1994, p. 53.*

ՀՀ-ին Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի վերաբերյալ տարածքային հավակնություններ ներկայացնող ռուս պաշտոնյան, ով ներկայացնում էր ադրբեջանական արտգործնախարարությունը, Ադրբեջանի տարածքում ապրող ադրբեջանցի թուրքերին համարում էր սելջուկների հետնորդները, այսինքն՝ աներկբայորեն նրանց համարում էր եկվորներ, ովքեր այս տարածաշրջանում հայտնվեցին միայն XI դարում՝ դուրս մղելով Արևելյան Անդրկովկասի բնիկ բնակչությանը:[1] 1920-ական թթ. և 1930-ական թթ. սկզբին «թյուրք» էթնանունն արդեն 1937 թ. փոխարինվեց «ադրբեջանցի» էթնանունով: Կարծում ենք, որ «Ադրբեջան» և «ադրբեջանցի» եզրերի շրջանառությունը խորհրդային իրականությունում կապված էր էթնոգենեզի տեսությունների հերթափոխի և նոր տեսության գերիշխանության հետ:

Ադրբեջանական պատմագրության զարգացման թեմատիկ միտումները շարունակաբար պտտվում են երկու հիմնական առանցքների շուրջ, առանց որոնց, թվում է՝ ադրբեջանական պատմագրությունը պարզապես կդադարի գոյություն ունենալուց: Այդ առանցքներն են ադրբեջանցիների ծագման և Կովկասում հայերի «բացակայության» կամ եկվորության «ապացուցման» խնդիրները[2]: Իրենց առջև դրված նպատակին, այն է՝ ադրբեջանցիների ավտոքթոնության ապացուցմանը հասնելու ճանապարհին թյուրքական տեսության կողմնակիցները չեն խորշում հակասական դրույթներ առաջ քաշելուց: Ադրբեջանցիներին վերագրվում է թյուրքական ծագում, իսկ թյուրքերի ներկայությունն Աղվանքում և Ատրպատականում թվագրվում է սկսած Ք.ա. I հազարամյակից[3]: Իսկ ահա ադրբեջանցիների էթնոգենեզը թվագրվում է Ք.ա. IV-III դարերից մինչև Ք.հ. X-XI դարերը:[4] Միևնույն ժամանակ աղվանների լեզուն համարվում է թյուրքական, չնայած այդ դրույթի հեղինակ Գեյբուլլաևը չի նշում գեթ մեկ սկզբնաղբյուր իր առաջ քաշած դրույթի համար, այնուհետ փորձում է հիմնավորել իր տեսակետը որոշ փաստարկներով, որոնք քննադատության չեն դիմանում: Նա նշում է, որ ալբան անունով թյուրքալեզու ցեղ առկա է ղազախների միջավայրում, ինչպես նաև ղրղզների, ուզբեկների, կարակալպակների և թուրքմենների մոտ, ինչպես նաև առկա է Ալբան տեղանունը Թուրքմենստանում[5]: Նախ, նախորդ դարում առկա ցեղանվան գոյությունը համարել հիմք քսան և ավելի դար առաջ գոյություն ունեցած էթնիկ հանրույթների թյուրքական ծագման համար, մեղմ ասած, գիտական տրամաբանության սահմաններում համատեղելի չէ: Ավելին, այդ տեղանունների և ցեղանունների առկայությունը խոսում է աղվաններից փոխառությունների և ազդեցությունների մասին, ինչպես նաև այն մասին, որ մյուս էթնոսների վրա ազդեցություն գործած էթնիկ հանրությունները գոյատևել են նրանցից առաջ: Թյուրքական ծագման տեսությունը թյուրքական է համարում ողջ Արևելյան Անդրկովկասը և նրան հարակից տարածքները: Սակայն անգամ 14-15-րդ դարերում բուն Աղվանքի տարածքում մահմեդականները մեծամասնություն չէին համարվում, գերիշխող էին քրիստոնյաները, իսկ թյուրք-թուրքմենական ակ և կարա կոյունլու ցեղերի զգալի ներկայություն կար Մուղանի և Ղարաբաղի տափաստաններում, դեռ ավելին՝ մինչև 15-րդ դար Շիրվանը և Շաքին անկախ էին[6]:

Էթնոգենեզի տեսությունների հերթափոխը հանդիսանում էր որպես օպերատիվ արձագանք երկրում ընթացող էթնոքաղաքական իրադրությանը: 1920-ական թթ. հետո մարքսիստական գաղափարաբանության ազդեցության ներքո և այդ շրջանում արդեն մեծ հեղինակություն վայելող Ն. Մառի ավտոքթոնության գերիշխող հայեցակարգի համաձայն՝

---

[1] *Տե՛ս Шнирельман В., Войны памяти : мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 119:*

[2] *Տե՛ս Խառատյան Հ., Ադրբեջանական պատմաշինության առանձնահատկությունները. Աղվանքը ադրբեջանական պատմագրության և քաղաքականության մեջ, ՊՆ ԱՌՀԻ, Աշխատանքային տետրեր, 2010, 4, էջ 69:*

[3] *Տե՛ս Гейбуллаев Г., К этногенезу азербайджанцев (историко-этнографическое исследование), Баку, 1991, с. 206:*

[4] *Նույն տեղում, էջ 212:*

[5] *Նույն տեղում, էջ 44:*

[6] *Խառատյան Հ., Քրիստոնեությունը Բուն Աղվանքի տարածքում կարգացած միջնադարում, «Հայաստանը եւ Քրիստոնյա Կովկասը». հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում և Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Եր.,2015, էջ 109-110:*

խնդիր դրվեց ապացուցելու ադրբեջանցիների ավտոքթոնության տեսակետը: 1936 թ. ստանալով լիարժեք միութենական հանրապետության կարգավիճակ՝ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները ձեռնամուխ եղան սեփական պատմության կառուցման կամ պատմաշինության գործին: Հազարամյա պատմություն ունեցող և պատմագիտական կայուն և հարուստ ավանդույթների տիրապետող Հայաստանի հետ համատեղ դուրս գալով Անդրֆեդերացիայի կազմից և ստանալով Հայաստանին համահավասար կարգավիճակ՝ արդիական խնդիր էր առաջանում ադրբեջանցիների համար գրեթե ոչնչից ստեղծել սեփական պատմությունը: Ամենադյուրին ձևը Խորհրդային Ադրբեջանի տարածքում գոյատևած երբեմնի հնագույն և վաղմիջնադարյան էթնիկ հանրույթներին ադրբեջանցիների նախնիներ համարելն էր, իսկ Արևելյան Անդրկովկասում երբևէ կազմավորված վարչաքաղաքական կազմավորումներն էլ հռչակել ադրբեջանական: Խորհրդային Ադրբեջանի տարածքում և Ղարաբաղում բնակվող թյուրքալեզու հանրույթներին և քրդերին սկզբնական շրջանում համարում էին տեղաբնիկ[1]: Իհարկե, նման վերաբերմունքը այս երեք էթնիկ հանրույթներին մեկտեղելու առումով պայմանավորված էր իշխող խորհրդային գաղափարաբանությամբ և ժողովուրդների եղբայրության կարգախոսներին ու գաղափարներին տուրք տալով: Այնուհետև այս տեսությունն ավելի մշակվեց ու խեղաթյուրման ենթարկեց Արևելյան Անդրկովկասի էթնիկական պատմությունը: Այդ գործին լծվել էին մի շարք ադրբեջանցի հեղինակներ[2]: Աղվանական տեսության հիմնադիրներից Զ. Յամպոլսկին ավելի հեռուն գնաց՝ հայտարարելով, որ, հնագույն ժամանակներից սկսած, ներկայիս Ադրբեջանի տարածքի էթնիկ համայնապատկերը գրեթե փոփոխության չի ենթարկվել, և էթնոգենետիկ զարգացումը անընդհատ շարունակվել է, ուստիև, ըստ նրա, հարկ է ժամանակակից ադրբեջանական լեզուն և ադրբեջանցիներին, ինչպես նաև Ադրբեջանի տարածքում բնակվող մյուս տեղաբնիկ էթնոսներին համարել Մեդիա-Ատրպատականի և Աղվանքի հնագույն տեղական բնակչության էթնիկական հետնորդներ[3]: Շուտով արդեն հայկական միջավայրում սկիզբ առած նոր իրողություններն իրենց ազդեցությունը թողեցին աղվանական տեսության հետագա զարգացման վրա: 1965 թ., երբ Հայաստանում նշվեց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը, ազգային զարթոնքի ալիքը կրկին շոշափեց նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը, և կազմակերպվեցին ստորագրահավաքներ՝ հանուն Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորման, Խորհրդային Ադրբեջանում սկսեցին պատրաստվել այս իրողություններին: Նոր ակտիվությամբ և երանգավորմամբ սկսեց քարոզվել ադրբեջանցիների ծագման աղվանական տեսությունը: Վերևում արդեն տեսանք, որ սկզբնական շրջանում առաջ էր քաշվում հայերի և ադրբեջանցիների ավտոքթոն համագոյակցության դրույթը Արցախում և Աղվանքում, սակայն այժմ արդեն ժխտվում էր հայկական տեղաբնիկ ներկայությունն այդ տարածքներում, հրապարակավ հավակնություններ են սկսում ներկայացվել իրականում հայկական, բայց աղվանական ներկայացվող հուշարձանների հանդեպ: Միտումն արդեն պարզ է՝ բավական է ներկայացնել դրանք աղվանական, իսկ քանի որ ադրբեջանցիները, ըստ այս տեսության, հանդիսանում են աղվանների ժառանգորդները, արդեն լուծվում է այդ հուշարձանները և հետևաբար տարածքները ադրբեջանական ներկայացնելու խնդիրը: Այս նոր միտման ներկայացուցիչներից է ադրբեջանցի հեղինակ Զիյա Բունիաթովը: Նրա աջակցությամբ ու գլխավորությամբ գործող ադրբեջանցի պատմաբանները, 1960-ական թթ. սկսած, իրենց աշխատություններում փորձում էին համոզել գիտական հանրությանը,

[1] *Տե՛ս Шнирельман В. А., указ. соч., с.129:*

[2] *Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960; Буниятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965; Мамедова Ф., Историческая география Кавказсой Албании (III в. до н.э.- VIII в.н.э.), Баку, 1986; Геюшев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1984; Сумбатзаде А., Азербайджанцы-этногенез и формирование народа, Баку, 1990.*

[3] *Ямпольский З., Об этногенетической непрерывности на почве Азербайджане, Вопросы истории Кавказской Албании, редактор Иг. Алиев, Баку, 1962, с. 22.*

որ Ադրբեջանի Հանրապետության ստեղծումից հետո այդ պետության տարածքում հայտնված հայկական բազմահազար պատմական հուշարձանները իբրև ոչ թե հայկական են, այլ ադրբեջանցիների քրիստոնյա նախնիներ հանդիսացող աղվաններից են մնացել[1]: Դեռ ավելին, Բունիաթովն Անդրկովկասի մի շարք տարածքներ հայտարարեց այսպես կոչված պատմական Ադրբեջանի մաս՝ Աղվանքը, Արցախը, Ուտիքը, Սյունիքը, Գարդմանքը, Նախիջևանը, Դերբենտի մարզը և այլն[2]: Բունիաթովը VIII-IX դարերում, ի թիվս պարսկական Ատրպատականի և պատմական Աղվանքի, Ադրբեջանի կազմում է համարում նաև Հայաստանի արևելյան մարզերը և ներկայիս ՀՀ տարածքը (բացառությամբ՝ Դվինի):[3] Նրա այս պնդումները լիովին հերքվեցին հայ պատմաբանների կողմից, ովքեր նշեցին, որ ելնելով Բունիաթովի նմանօրինակ տրամաբանությունից՝ կարելի է լիովին հայկական տարածքներ համարել Արաբական խալիֆաթի կողմից ստեղծված Արմինիա ռազմավարչական միավորի մեջ մտնող բոլոր երկրները (Հայաստան, Վրաստան, Աղվանք) և նրանց մշակույթն ու գրականությունը[4]: Ներկայիս ՀՀ տարածքը ադրբեջանական համարելու՝ դեռևս խորհրդային տարիներին Բունիաթովի կողմից սկզբնավորված նկրտումները տարածում գտան հետխորհրդային Ադրբեջանի պատմագրության մեջ՝ այս անգամ «Արևմտյան Ադրբեջան» երևակայական անվամբ[5]: Ավելին՝ ադրբեջանական պատմագրությունում հանդիպում է նաև հայերի՝ այսպես կոչված միգրացիայի և եկվորության վերաբերյալ առանձին աշխատություն[6]: Իր հերթին էլ Բունիաթովի հետևորդ Ֆ. Մամեդովան փորձում էր աղվանական, ապա ադրբեջանական համարել Արևելյան Անդրկովկասում և Հայոց Արևելից կողմանքում ստեղծված գրական, մատենագրական, մշակութային մեծարժեք ժառանգությունը[7]:

Աղվանական տեսության ներկայացուցիչ ադրբեջանցի պատմաբանների արշավին զուգահեռ գործնական քայլեր էին ձեռնարկում Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները՝ ոչնչացնելով հայկական հուշարձանները, վերացնելով այն ամենը, ինչը կարող էր հայկականության ցուցիչ լինել: 1980-ական թթ. Խորհրդային Ադրբեջանում մեծ թափ հավաքած աղվանական հռչակված հայկական հուշարձանների համատարած ջարդը բացահայտում է, որ Ադրբեջանի ղեկավարությունը փոխել է իր հայեցակարգը և հայկական հուշարձանների նկատմամբ յուրացման ապարդյուն ճիգեր գործադրելով՝ գերադասում է իսպառ բնաջնջել դրանք: Արդյունքում համատարած ավերումների են ենթարկվել պատմական մեծարժեք արձանագրություններով հարուստ հազարավոր խաչքարեր և տապանաքարեր, մի քանի հարյուր հայկական գերեզմանոցներ, բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ: Դեռ 1896 թ. Շուշվա ռեալական ուսումնարանի ուսուցիչ և Ս. Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության անդամ Է. Ռյոսլերի կատարած պեղումները Խոջալուի մոտ ի հայտ են բերել հետաքրքիր գտածոներ, որոնք, ամենայն հավանականությամբ, առնչակցվում են Շենգավիթյան մշակույթի հետ՝ դատելով սև փայլեցված խեցեղենից[8]: Իսկ գտնված իրերն էլ հիմք են տալիս կարծելու, որ այդ շրջանի բնակչությունը վարել է երկրագործական տնտեսաձև և որևէ առնչություն չունի քոչվորական կացութաձևի ներկայացուցիչների հետ: Նման փաստերն են, որ անառարկելի են դարձնում այն իրողությունը, որ տեղաբնիկության հարցերի քառուղիներում դեգերող ադրբեջանական պատմագետներն անկարող են հաղթահարել

---

[1] *Կարապետյան Ս., Հայկական պատմական հուշարձանները ապատագրված շրջաններում, Հայաստանի ապատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, կազմ. և խմբ.՝ Ա. Այբալյանը, Եր., 2006, էջ 341-342:*

[2] *Буниятов З., указ. соч., с. 3.*

[3] *Мнацаканян Ас., Севак П., По поводу книги З. Буниятова "Азербайджан в VII-IX вв.", К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ер., 1991, с. 308,*

[4] *Նույն տեղում, էջ 309:*

[5] *Магеррамов Э., Депортация азербайджанцев из Западного Азербайджана, Исторические факты о деяниях армян на азербайджанской земле, под ред. Т. Мусаева, А. Мамедов, Баку, 2003, с. 63-74.*

[6] *Вердиева Х., Гусейн-заде Р., "Родославная" армян и их миграция на Кавказ с Балкан, Баку, 2003.*

[7] *Мамедова Ф., "История Албан" Моисея Каланкатуйского как источник по общественнуму строю раннесредневековой Албании, Баку, 1977.*

[8] *Բաբայեան Լ., Խոջալլուի գերեզմանները, Ազգագրական հանդէս, Ա գիրք (1896), էջ 39:*

իրենց քոչվոր նախնիների և այս տարածաշրջանի բնիկ երկրագործների նույնականության ապացուցման խնդիրը:

Դեռևս 1981 թ. «Археологические открытия 1980 г.» տարեգրքում հրապարակվեց Վ. Ալիևի «Исследования в Лачинском районе» հոդվածը[1], որտեղ տեղադրված էր Կատոսավանքի բարավորի արձանագրության լուսանկարը՝ հայերեն արձանագրություններով, որը հեղինակը նկարագրում էր որպես ալբաներեն արձանագրություն՝ նշելով, որ տեղական բնակչությունն այդ եկեղեցին իբրև թե անվանում է «աղվանական վանք»[2]: Այս հաղորդումը մեծ աղմուկ հանեց Լենինգրադի գիտական շրջանակներում և գիտական աշխարհում ընդհանրապես, և հեղինակը ծաղրուծանակի արժանացավ: Դրանից 15 տարի անց՝ 1996 թ., Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկավար՝ Հակոբ Սիմոնյան) հայտնաբերեց, որ Կատոսավանքը պայթեցված է, ընդ որում՝ բարավորի հատվածում պատը գայլիկոնված էր, և արձանագրություններով քարը շպրտված էր ձորը, ինչից էլ կարելի էր եզրակացնել, որ այս ամենն արված էր արձանագրությունը ոչնչացնելու և դրա սխալ, միտումնավոր մեկնաբանության հետ կապված աղմուկը լռեցնելու համար: Պետք է նշել այն հանգամանքը, որ դեռևս 1981 թ. պատմաբան Ալեքսան Հակոբյանը տեսել է Կատոսավանքը կանգուն վիճակում: Իսկ Աղդամի շրջանում՝ Շահբուլաղ գյուղի մոտ, գտնվող կենտրոնագմբեթ եկեղեցին համարվում էր պաշտոնապես ընդունված աղվանական հուշարձաններից մեկը: 1994 թ. Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբն արձանագրեց, որ եկեղեցու արևմտյան կողմում՝ դռան վրա, տեղադրված խաչքարը բացակայում էր: Հետագայում այդ խաչքարը գտնվեց Աղդամ քաղաքի նախկին թանգարանի բակում: Բնականաբար, նշված չէր ծագման վայրը: Բացի այդ՝ եկեղեցին վերականգնված էր, սակայն հայկական ճարտարապետության հետ անգամ ամենահեռավոր կերպով ոչ մի աղերս չունեցող ճարտարապետական կանոններով[3]: Թերևս բացահայտ հակահայկական դրսևորում էր Ստեփանակերտի թատրոնի անվան միջից «հայկական» բառի դուրսբերումը, դեպի Խորհրդային Հայաստան էքսկուրսիաների անցկացման արգելքը[4]:

1950-ական թթ. Շուշիում առկա կիսաքանդ մոտ 10-12 եկեղեցիներն ավերվել էին ադրբեջանական իշխանությունների նախաձեռնությամբ՝ քաղաքի արդիականացման կարգախոսի ներքո, և ամենաուշագրավն այստեղ այն է, որ եկեղեցիները քանդելու համար գործուղվում էին հայկական շինջոկատներ[5]: Իհարկե, 1930-ական թթ. ստալինյան բռնաճնշումների և անաստվածային-աթեիստական գաղափարաբանության տիրապետության պայմաններում, երբ նույնիսկ հայկական բնակավայրերում եկեղեցիները և մատուռները օգտագործվում էին որպես կոլտնտեսության պահեստներ, ժողովուրդների եղբայրության և բարեկամության գաղափարական նրբերանգի ներքո նման ձեռնարկը ներկայացվում էր որպես խորհրդային արդիականացման սովորական, հերթական դրսևորում: Ադրբեջանական իշխանությունների քաղաքական հաշվարկները հեռահար նպատակներ ունեին. հետագայում, երբ հայկական կողմը Խորհրդային Ադրբեջանին փորձեր մեղադրել մշակութային խտրական քաղաքականություն վարելու մեջ, վերջինս չքմեղանալու էր՝ մատնանշելով, որ պատմամշակութային տվյալ հուշարձանները քանդվել են հենց հայերի ձեռքով:

Նշված օրինակներն առավել քան հրատապ են դարձնում մշակութային բաղադրիչի կարևորմանը Արցախյան հիմնախնդրում, և այդ համատեքստում Արցախի Տիգրանակեր-

---

[1] *Алиев В., Исследования в Лачинском районе, «Археологические открытия 1980 г.», М., 1981, с. 414-415.*

[2] *Նույն տեղում, էջ 415:*

[3] *Ներկայացված երկու տեղեկությունների համար երախտապարտ ենք պ.գ.թ. Արտակ Գնունուն:*

[4] *Сабиров А., НКАО: горькие плоды застоя, Известия, 1988-07-13.*

[5] *Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ (բանասաց՝ Հարությունյան Աշոտ, ծնվ. 1957թ., ք. Շուշի, կրթությունը՝ բարձրագույն):*

տի օրինակով հայկական մշակութային ժառանգության հայտնաբերման, ուսումնասիրության ու հանրայնացման իրողությունն իրոք տպավորիչ է[1]: Անհրաժեշտ է շարունակել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները և ընդլայնել ոլորտները:

Ադրբեջանցիների էթնոգենեզի իրանական տեսությունը շրջանառության մեջ մտավ 1930-ական թթ. կեսերից՝ Խորհրդային Ադրբեջանի ղեկավար Միր-Ջաֆար Բաղիրովի անմիջական ցուցումով, որը հանձնարարեց ստեղծել ադրբեջանցիների պատմությունն այնպես, որ ապացուցվեր նրանց ավտոքթոնությունը Արևելյան Անդրկովկասում, և միևնույն ժամանակ տարանջատեն նրանց թյուրքական արմատներից[2]: Հարկ էր ստեղծել տեսություն, որը կապացուցեր, որ ադրբեջանցիները հին մարերի հետնորդներն են: Այս տեսության առաջադրումը ևս պայմանավորված էր էթնոքաղաքական իրադրության թելադրանքով և հատկապես արդիական դարձավ Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ 1941-1946 թթ. խորհրդային զորքերի կողմից Հյուսիսային Իրանի օկուպացիայի պայմաններում իրականացվում էր հակաիրանական քարոզչություն, և փորձեր էին արվում արթնացնել ադրբեջանական ինքնագիտակցություն տեղական բնակչության շրջանում և առաջացնել համաադրբեջանական միասնության զգացում, որին հետևելու էր իրանական Ատրպատականի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին, այդ նպատակով շրջանառության մեջ դրվեց «Մեծ Ադրբեջան» եզրը:

Միով բանիվ՝ քննության առնված տեսությունները ադրբեջանցիների վերաբերյալ, անկախ ըստ քաղաքական նպատակահարմարության շարունակական հերթափոխից, կայուն կերպով ունեցել են քաղաքական հարցեր լուծելու հստակ նպատակներ, կարևորագույններից մեկը հակահայկականության շարունակական ակտիվության պահպանումն էր և է: Այդ քաղաքականությունն արդիական էր և՛ Խորհրդային Ադրբեջանում, և՛ ներկայիս Ադրբեջանում: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Արցախի՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում առկա մշակութային արժեքները գտնվում են իրական վտանգի ներքո: Այդ վտանգի մասին խոսելն ինքնանպատակ չէ: Պատերազմի ընթացքում Ադրբեջանը կրակային թիրախավորման տակ էր առել Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին[3]: Նման գործողությունները շարունակվում են նաև 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության փաստաթղթի ստորագրումից հետո: Հրադադարի պայմաններում Ադրբեջանը հայկական մշակութային ժառանգության հետևողական ոչնչացման քաղաքականությունը շարունակում է, Շուշիում նորից վանդալիզմի թիրախ են դարձել Ղազանչեցոց եկեղեցին և Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին[4]: Հայկական մշակութային արժեքների նկատմամբ վանդալիզմի դրսևորումները Ադրբեջանի նպատակադրված քաղաքականությունն է, որը կարմիր թելի պես անցնում է խորհրդային շրջանից մինչև օրս: Այդ վանդալիզմը ադրբեջանական ինքնության կառուցարկումներում կենտրոնական տեղ գրավող հակահայկականության բաղադրիչներից է: Հայկական հետքի ջնջումը լուծում է դրանց պատկանելության վերախմբագրումը[5]: Էթնոծագումնաբանության վերաբերյալ տեսությունների հերթափոխերից անկախ՝ Ադրբեջանի քաղաքականության շարունակականությունը, անփոփոխելիությունը հայկական մշակութային արժեքների նկատմամբ խոսում է հայկական տարրի, մշակութային արժեքների՝ մշտական սպառնալիքի ներքո գտնվելու մասին:

Այսպիսով՝ 20-րդ դարի ողջ ընթացքում էթնոգենեզի տեսությունները և էթնիկ պատմության հետ կապված խնդիրները կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն որպես գի-

---

[1] *Պետրոսյան Հ., Հուշարձանները հայ-ադրբեջանական հակամարտության գոտում. Արցախի Տիգրանակերտ. Քարոզչություն և հակաքարոզչություն, Պատմություն և մշակույթ. Ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Եր., 2011, էջ 31:*

[2] *Шнирельман В., указ. соч., с. 133.*

[3] *https://escs.am/am/news/7277 (վերջին մուտքը՝ 25.07.2021):*

[4] *https://www.azatutyun.am/a/31069905.html (վերջին մուտքը՝ 25.07.2021):*

[5] *https://urbanista.am/artsakh-heritage (վերջին մուտքը՝ 25.07.2021):*

տական տեսություններ, այլև ադրբեջանական էթնոսի կայացման և զարգացման վրա ազդող կարևորագույն գործոններ: Ադրբեջանական մտավորականության, քաղաքական ղեկավարության շրջանում անընդհատ կար այն իրողության գիտակցումը, որ հարևանների, հատկապես՝ հայերի հետ հարաբերություններ կառուցելու համար անհրաժեշտ է ստեղծել «երկար» պատմություն, ինչը հնարավորություն կտար հիմնավորել ադրբեջանական կողմի հավակնությունները ոչ միայն Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի, այլև Հայաստանի մաս կազմող տարածքների հանդեպ:

***Артак Хачатрян, ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.*** Создание Советского Союза и советизация Закавказья ввели в новый этап процесс построения нации Азербайджана. Советское руководство рассматривало Кемалистскую Турцию и Азербайджан как средства распространения социализма на мусульманском Востоке, и именно этим обусловлена особая политика Союзного центра в отношении Азербайджана. Советский Азербайджан прошел несколько этапов поисков идентичности. В сталинском понимании нации важное место занимала территория. По логике этого понимания и проводилась государственная политика Советского Азербайджана. Политика азербайджанских властей в отношении НКАО, среди прочего, имела также компонент культурного присвоения. «Албанизация» культурного слоя Арцаха, особенно церквей, духовных структур, имела задачу исключить подлинность автохтонности местных армян, тем самым назвав азербайджанцев истинным «историческим хозяином» территории НКАО. Логика этой политики, начавшейся еще с советского периода, Азербайджан продолжает по сей день.

***Ключевые слова:*** НКАО, СССР, Агванк (Кавказская Албания), национально-государственная политика, этногенезис, Восточное Закавказье, А. Деникин, Шуши, Агванская теория, Маро-Атропатенская теория, Тюркская теория.

***Artak Khachatryan, THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO.*** With the creation of the Soviet Union and the Sovietization of Transcaucasia, the process of nation-building in Azerbaijan entered a new phase. The Soviet leadership considered Kemalist Turkey and Azerbaijan as a means of spreading socialism in the Muslim East, which is the reason for the special policy of the Union center towards Azerbaijan. Soviet Azerbaijan went through several stages of identity search. In Stalin's understanding of the nation, the territory had an important place. The state policy of Soviet Azerbaijan was carried out by the logic of this understanding. The policy of the Azerbaijani authorities towards the NKAO also had a component of cultural appropriation. "Albanization" of the cultural layer of Artsakh, especially churches, spiritual structures, had the task of excluding the authenticity of the autochthonousness of local Armenians, calling the Azerbaijanis the true "historical master" of the NKAO territory. The logic of this policy, which dates back to the Soviet period, Azerbaijan continues to this day.

***Keywords:*** NKAO, USSR, Agvank, national and state policy, ethnogenesis, Eastern Transcaucasia, A. I. Denikin, Shushi, Agvan theory, Medo-Atropatenian theory, Turkic theory.

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## *ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## *АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ*

# HISTORY AND CULTURE

## *JOURNAL OF ARMENIAN STUDIES*

2021, № 1

**Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան**

**Խմբագիր՝ Միքայել Մալխասյան**

**Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան**
**Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի**
**Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 200**